Հինգերորդ հաղորդում

Եզրասը՝ քահանայական դպիրը, և «եզրասների» անհրաժեշտությունը՝ նրանց, ովքեր հմուտ են Աստծու խոսքում

Գրվածքների ընթերցում. Եզր 7:6, 11-12, 21, 8:21-23, Նեմ 8:1-9, 11-13, 12:26

I. Եզրասը քահանա էր, ինչպես նաև դպիր. այսպիսով՝ նա ոչ թե տառի դպիր էր, այլ քահանայական դպիր՝ Եզր 7:6, 11-12, 21, Նեմ 8:1-2, 8-9, 11-12, 12:26.

Ա. Քահանա մեկն է, ով ձուլված է Տիրոջ հետ և հագեցած է Տիրոջով. Եզրասն այսպիսի մարդ էր՝ Եզր 8:21-23:

Բ. Եզրասը մարդ էր, ով ապավինում էր Աստծուն, ով մեկ էր Աստծու հետ, հմուտ էր Աստծու խոսքում, և ով ճանաչում էր Աստծու սիրտը, Աստծու ցանկություններն ու Աստծու տնտեսությունը՝ 7:6, 11-12, 21:

Գ. Որպես քահանայական դպիր՝ Եզրասը մեկ էր Տիրոջ հետ այն բանի շնորհիվ, որ մշտապես հպվում էր Նրան՝ Նեմ 8:1-2, 8-9, 11-12, 12:26:

Դ. Եզրասը նոր ոչինչ չէր խոսում. այն, ինչ նա խոսում էր, Մովսեսն արդեն խոսել էր՝ Եզր 7:6, Նեմ 8:14, Բ Պտ 1:12:

Ե. Քահանաներն ու դպիրները հավաքվեցին Եզրասի՝ դպիրի մոտ, որպեսզի ներըմբռնեին օրենքի խոսքերը. Նեեմիայի գրքի 8:13-րդ խոսքում «ներըմբռնել» բառը նշանակում է ընկալել խորքային նշանակությունը:

II. Եզրասը վերակազմեց Իսրայելի ժողովրդին՝ նրանց կրթելով երկնային ճշմարտություններով, որպեսզի Իսրայելը դառնար Աստծու վկայությունը՝ խխ. 1-3, 5-6, 8, 13-18.

Ա. Իսրայելի առնչությամբ Աստծու մտադրությունը երկրի վրա կազմությամբ աստվածային ժողովուրդ ձեռք բերելն էր, որը կլիներ Նրա վկայությունը՝ Աստծու խոսքով վերակազմված ժողովուրդ՝ Եսյ 49:6, 60:1-3, Կղս 3:16:

Բ. Գերությունից վերադառնալուց հետո Իսրայելի ժողովուրդը դեռ անսանձ էր, քանի որ նրանք ծնվել ու մեծացել էին Բաբելոնում և իրենց կազմությամբ բաբելոնյան էին դարձել.

1. Բաբելոնական տարրը ներդրվել էր նրանց մեջ և նրանց էության կազմությունը դարձել՝ Զք 3:3-5:
2. Այն բանից հետո, երբ նրանք վերադարձան իրենց հայրերի երկիր և Իսրայելի պետության քաղաքացիներ դարձան, նրանք պետք է վերակազմվեին Աստծու խոսքով՝ Նեմ 8:1-3, 5-6, 8, 13:

Գ. Ուսուցման և վերակազմության անհրաժեշտություն կար, ինչն Աստծու ժողովրդին կմտցներ մի մշակույթի մեջ, որը համապատասխանում էր Աստծուն, մշակույթ, որն արտահայտում էր Աստծուն. այպիսի մշակույթը շատ կրթություն է պահանջում՝ խ. 8:

Դ. Աստծու ժողովրդին վերակազմելու գործում Եզրասը շատ պիտանի եղավ, որովհետև կրում էր երկնային և աստվածային կազմության ողջ

հանրագումարը, և նա մեկն էր, ում միջոցով մարդիկ կարող էին վերակազմվել Աստծու խոսքով՝ խխ. 1-2:

Ե. Եզրասը մարդկանց վերադարձրեց Աստծու Խոսքին, որպեսզի նրանք վերակրթվեն, վերակազմվեն աստվածային Խոսքում եղող երկնային ճշմարտություններով:

Զ. Աստծու մարդկանց վերակազմելու համար անհրաժեշտ էր նրանց կրթել Աստծու բերանից ելնող և Աստծուն արտահայտող խոսքով՝ Սղմ 119:2, 9, 105, 130, 140.

1. Աստծու մարդկանց վերակազմել նշանակում է նրանց կրթել՝ նրանց զետեղելով Աստծու խոսքի մեջ, որպեսզի նրանք հագենան խոսքով՝ Կող 3:16:
2. Մեր ներսում Աստծու խոսքի աշխատելուն զուգընթաց Աստծու Հոգին, ով Աստված Ինքն է, խոսքի միջոցով Աստծու բնությունը Աստծու տարրի հետ միասին ինքնաբերաբար բաշխում է մեր էության մեջ. այսկերպ մենք վերակազմվում ենք՝ Բ Տմթ 3:16-17:

Է. Եզրասի սպասավորության միջոցով վերակազմվելու արդյունքում Իսրայելը (նախատիպով) առանձնահատուկ ազգ դարձավ, ազգ որ սրբացված ու առանձնացված էր առ Աստված և արտահայտում էր Աստծուն՝ Եսյ 49:6, 60:1-3, Զք 4:2.

1. Գերությունից վերադարձածները վերակազմվեցին անձնապես ու ընդհանրականորեն՝ Աստծու վկայությունը դառնալով:
2. Նրանք ներարկվում էին Աստծու մտքով, Աստծու խոհերով և այն ամենով, ինչ Աստված է. դա նրանց Աստծու վերարտադրությունը դարձրեց:
3. Այսպիսի աստվածային կազմության շնորհիվ բոլորը Աստված դարձան կյանքով և բնությամբ. արդյունքում նրանք աստվածային ազգ դարձան, որն արտահայտում էր աստվածային բնավորությունը՝ Ա Պտ 2:9:

III. Տիրոջ վերականգնման մեջ մեզ «եզրասներ» են անհրաժեշտ՝ քահանայական ուսուցիչներ, որոնք շփվում են Աստծու հետ, որոնք հագեցած են Աստծով, որոնք մեկ են Աստծու հետ, որոնք լցված են Աստծով և որոնք հմուտ են Աստծու Խոսքում. նման մարդը որակավորված է վերականգնման մեջ ուսուցիչ լինելու՝ Մտթ 13:52, Բ Կրթ 3:5-6, Ա Տմթ 2:7, Բ Տմթ 1:11.

Ա. Տեր Հիսուսն ուսուցանում էր մարդկանց, որպեսզի նրանց դուրս հաներ սատանայական խավարից ու բերեր աստվածային լույսի մեջ՝ Մրկ 6:6, հմմտ Գրծ 26:18.

1. Մարդու՝ մեղքի մեջ ընկնելը խախտեց նրա հաղորդակցությունն Աստծու հետ՝ բոլոր մարդկանց տգետ դարձնելով Աստծու գիտության առնչությամբ. նման տգիտության արդյունքը խավարն ու մահն են՝ Եփս 4:17-18:
2. Տերը՝ որպես աշխարհի լույսը, եկավ որպես մեծ լույս, որպեսզի շողա մահվան ստվերում նստած մարդկանց վրա՝ Հվի 8:12, Մտթ 4:12-16:

3. Տիրոջ ուսմունքն ազատագրում էր լույսի խոսքը, որպեսզի խավարի ու մահվան մեջ գտնվողները կյանքի լույսը ստանան՝ Հվի 1:4:

Բ. Ուսուցումը հավասարազոր է հայտնության, որը վերցնում է ծածկոցը՝ Ա Տմթ 2:7, Եփս 3:3-4, 9.

1. Ուսուցանել նշանակում է ծածկոցը վերցնել. երբ ուսուցանում ենք ուրիշներին, պետք է վերցնենք վարագույրը, որպեսզի նրանք ինչ-որ բան տեսնեն Եռամեկ Աստծու վերաբերյալ:
2. Երբ ինչ-որ բան ենք խոսում եկեղեցական հավաքույթին, մեր խոսելը պետք է ծածկոցը վերցնել լինի. դա նշանակում է, որ մեր ուսուցանելը պետք է հայտնություն ներկայացնի՝ Ա Տմթ 4:6:
3. Այսօրվա «եզրասները» պետք է տքնեն, որպեսզի ձևավորեն Աստծու մարդկանց կազմությունը՝ նրանց կրթելով ճշմարտությամբ, ինչը նրանց կտա երկրի վրա Աստծու վկայությունը լինել՝ Նրա ընդհանրական արտահայտությունը՝ Նեմ 8:1-8, 13, Բ Տմթ 2:2, 15, Ա Տմթ 3:15:

Գ. Վերականգնումն ունի բարձրագույն ճշմարտությունը, այն ճշմարտությունը, որն անցած դարերի ընթացքում վերականգնված ճշմարտությունների ավարտունությունն է՝ 2:4, Բ Տմթ 2:2, 15.

1. Մեծագույն կարիքը, որ պետք է բավարարենք, Տիրոջ վերականգնման մեջ եղող սրբերին ճշմարտության մեջ բերելն է վերականգնման հետագա առաջխաղացման համար՝ Ա Տմթ 2:4, Բ Տմթ 2:2, 15:
2. Սուրբ Գրվածքներում մենք ունենք և՛ օբյեկտիվ ճշմարտություններ, և՛ սուբյեկտիվ ճշմարտություններ՝ Ղկս 24:39, Ա Կրթ 15:45բ, Հռմ 8:34, 10, Կղս 3:1, 1:27:
3. Աստվածաշնչի մեր ուսումնասիրության մեջ մենք պետք է ոչ թե սոսկ «ճյուղերին» ուշադրություն դարձնենք, այլև խորամուխ լինենք «արմատների» և «բնի» մեջ:
4. Մենք պետք է տեսնենք Աստծու տնտեսության քայլերի և Քրիստոսի Մարմնի բյուրեղացված նշանակությունները՝ Հվի 1:14, Ա Կրթ 15:45բ, Եփս 1:22-23, 4:4-6:

Դ. Ճշմարտությամբ կազմվելը նշանակում է, որ ճշմարտությունը ներդրվում է մեր մեջ՝ դառնալով մեր խորքային էությունը՝ մեր օրգանական կազմությունը՝ Բ Հվի 2.

1. Աստվածային հայտնության խորքային տարրը պետք է ներդրվի մեր մեջ և դառնա մեր էության բաղադրիչը՝ Կղս 3:16:
2. Երբ ճշմարտությունը մեր մեջ է մտնում մեր հասկացողության միջոցով, այն մնում է մեր հիշողության մեջ, այնուհետև մենք մտապահում ենք ճշմարտությունը մեր հիշողության մեջ, ինչի շնորհիվ ճշմարտությունը կուտակվում է մեր մեջ՝ Ա Պտ 1:13, Բ Պտ 1:15, 3:1:
3. Երբ ճշմարտությունը մեր հիշողության մեջ է մտնում, այն հաստատուն և երկարատև սնուցում է դառնում. արդյունքում ճշմարտու -

թյունը կուտակվում է մեր մեջ, և մենք մշտական սնուցում ենք ձեռք բերում՝ Կող 3:16, 4, Ա Տմթ 4:6:

Ե. Տիրոջ վերականգնման մեջ եղող բոլոր սրբերը պետք է ուսուցանվեն աստվածային հայտնության մեջ՝ Բ Տմթ 2:2, 15.

1. Աստվածաշնչում եղող գրեթե բոլոր հանգուցային հայտնությունները դիտարկված են Նի և Լի եղբայրների սպասավորության մեջ. մենք պետք է մեր ուշադրությունը դարձնենք այս մաքուր և առողջ բաներին, որպեսզի ժամանակ չվատնենք «թունավոր դդումներ» հավաքելու վրա՝ Դ Թգ 4:38-41:
2. Մենք բոլորս պետք է օգնություն ստանանք շնորհիվ Կենսաուսումնասիրությունների և ծանոթագրություններով հանդերձ Վերականգնման տարբերակի, որպեսզի տեսնենք Աստվածաշնչի խոսքի խորքային նշանակությունը՝ Նեմ 8:8, 13:

© 2022 Living Stream Ministry